



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

16 օգոստոսի 2024 թվականի N 1762-Ա


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՏԱԿ
ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 13 ԱՆԱՄՆԱՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ՍԵՅՐԱՆ ԻԼՅԻՉԻ
ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստորի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Սեյրան Իլյիչի Սուքիասյանի 2024 թվականի հուլիսի 15-ի թիվ 3671 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ գյուղում Սեյրան Իլյիչի Սուքիասյանին (ծնված 1967 թվականի հոկտեմբերի 16-ին) պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի ապրիլի 25-ի թիվ 5 որոշմամբ հատկացված, 08-105-0055-0006 կադաստրային ծածկագրով, 0.13207 հա մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Սարատակ 1-ին փողոց, թիվ 13 անասնաշենք հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 16



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

16 օգոստոսի 2024 թվականի N 1763-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ
Գ.ՆՃԴԵԿԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ 13/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ՀՐԱԶԻԿԻ ՏՈՆՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Աշոտ Հրաչիկի Տոնոյանի (ծնված 1956 թվականի հուլիսի 21-ին) 2024 թվականի հուլիսի 22-ի N 3829 դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Ձերժինսկու փողոց 1-ին նրբանցք 21 հասցեում 08-002-0143- կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,01767հա մակերես, որից 0,01000հա մակերեսով հողամասը Աշոտ Հրաչիկի Տոնոյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 0,00767հա մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատուց սեփականության իրավունքով: Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, /1981թվականի հոկտեմբերի 19-ի տեխնիկական անձնագրով/ և Աշոտ Հրաչիկի Տոնոյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 53-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Ձերժինսկու փողոց 1-ին նրբանցք 21 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Արթիկ քաղաք Գ.ՆՃԴԵԿԻ փողոց 2-րդ նրբանցք 13/1 բնակելի տուն:
2. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաք Գ.ՆՃԴԵԿԻ փողոց 2-րդ նրբանցք 13/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Աշոտ Հրաչիկի Տոնոյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0,01000հա մակերեսով հողամասին կից 0,00767հա մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0,01767հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:
3. Հողամասում 2001 թվականից հետո կառուցված շենք-շինությունները թողնել ինքնակամ:

4. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Հրաչիկի Տնօրյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՊԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 16



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

16 օգոստոսի 2024 թվականի N 1764-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ
ՍԱՍՈՒՆԳԻ ԴՎՎԹԻ ՓՈՂՈՑ 6/3 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ
ՆՈՒՅՆ ՏԱՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹԱՄԱՐԱ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ
ԱՓՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Թամարա Արշալույսի Ափոյանի(ծնված 1960 թվականի նոյեմբերի 15-ին) կողմից լիազորված /լիազորագիր N 50AԵ9992256/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի բնակիչ Արամ Գրիշայի Մելքոնյանի (ծնված 1985 թվականի նոյեմբերի 5-ին) 2024 թվականի հուլիսի 8-ի N 3528 դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Սասունցի Դավթի փողոց 6/3 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,03248 հա, որից 0,03248հա մակերեսով հողամասը Թամարա Արշալույսի Ափոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, և Թամարա Արշալույսի Ափոյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 53-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Սասունցի Դավթի փողոցում գտնվող բնակելի տանը տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Սասունցի Դավթի փողոց 6/3 բնակելի տուն:
- 2.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Սասունցի Դավթի փողոց 6/3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Թամարա Արշալույսի Ափոյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0,03248 հա մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0,03248 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:
- 3.Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարարի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թամարա Արշալույսի Ափոյանի կողմից լիազորված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի բնակիչ Արամ Գրիշայի Մելքոնյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՆԱԿԻՅԱՆ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 16



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

16 օգոստոսի 2024 թվականի N 1765-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԹԻՎ 435 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1-րդ կետերով և հիմք ընդունելով Ալբերտ Հրաչի Գալոյանի 2024 թվականի օգոստոսի 06-ի N° 4122 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արթիկի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 24-ի «Արթիկ քաղաքի բնակիչ Ալբերտ Հրաչի Գալոյանի Շինարարների 15 շենքի թիվ 21 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց իրեն հատկացնելու մասին» թիվ 435 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Ալբերտ Հրաչի Գալոյան»-ի փոխարեն գրել՝ «Ալբերտ Հրաչի Գալոյան»:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում իրագրված օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2024 թվականի N 1766-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 01-Ի ԹԻՎ 1709-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հովածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 15-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը մերժելու մասին N Ա-15082024-08-00013 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 01-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Կասյան փողոց 36 հասցեի հողամասի եվ շենք-շինությունների նկատմամբ Ռուբեն Վալենտերի Քերոբյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» թիվ 1709-Ա որոշման վերնագրում, նախաբանում, 2-րդ և 6-րդ կետերում «Ռուբեն Վալենտերի Քերոբյան» անուն, հայրանուն ազգանունը փոխարինել «Ռուբեն Վիլենտերի Քերոբյան» անուն, հայրանուն ազգանունով :
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 01-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Կասյան փողոց 36 հասցեի հողամասի եվ շենք-շինությունների նկատմամբ Ռուբեն Վալենտերի Քերոբյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» թիվ 1709-Ա որոշման 3-րդ կետի գործողությունը դադարեցնել:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նկատմամբ Ռուբեն Վիլենտերի Քերոբյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 19



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru | Ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2024 թվականի N 1767-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՊԵՄՋԱՇԵՆԻ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՅՕԹՅԱ ՏԱՂԱՎԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի
1-ին մասի 24-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Պեմզաշենի
նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային
կազմակերպության բացօթյա տաղավարի կառուցման աշխատանքների ձեռքբերման
ծավալները որոշելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

- 1) Մովսես Մովսիսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի
համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի
բաժնի պետ-հանձնաժողովի անդամ,
- 2) Ժորա Սարիբեկյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի
համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի
բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունները ժամանակավոր կատարող-
հանձնաժողովի անդամ,
- 3) Սերգեյ Ալեքյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի
համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր
մասնագետ -հանձնաժողովի անդամ,
- 4) Գուրգեն Ասատրյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի
համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնի
առաջատար մասնագետ-հանձնաժողովի անդամ,
- 5) Մկրտիչ Սահրադյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի
համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի
առաջատար մասնագետ-հանձնաժողովի անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ 374 244 52021, էլ. փոստ artikmun@mail.ru ինտ, կայք www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2024 թվականի N 1768-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 1422-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 24-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղում Կարապետ Սամսոնի Կարապետյանին, Սվետլանա Կարապետի Կարապետյանին, Մարինե Կարապետի Կարապետյանին և Նիկոլայ Կարապետի Կարապետյանին պատկանող տնամերձ հողամասի հասցեի փոփոխություն կատարելու մասին>> N 1422-Ա որոշման մեջ «Կարապետ Սամսոնի Կարապետյանին (ծնված 1964թվականի դեկտեմբերի 06-ին), Սվետլանա Կարապետի Կարապետյանին (ծնված 1964թվականի սեպտեմբերի 24-ին), Մարինե Կարապետի Կարապետյանին (ծնված 1990թվականի հունիսի 22-ին) և Նիկոլայ Կարապետի Կարապետյանին (ծնված 1991թվականի հոկտեմբերի 18-ին)» փոխարեն գրել «Կարապետ Սամսոնի Կարապետյանին (ծնված 1949թվականի հունիսի 08-ին), Սվետլանա Կարապետի Կարապետյանին (ծնված 1973թվականի օգոստոսի 12-ին), Մարինե Կարապետի Կարապետյանին (ծնված 1975թվականի մարտի 21-ին) և Նիկոլայ Կարապետի Կարապետյանին (ծնված 1980թվականի օգոստոսի 27-ին)»:

2.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2024 թվականի N 1769-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 1421-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 24-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղում Կարապետ Սամսոնի Կարապետյանին, Սվետլանա Կարապետի Կարապետյանին, Մարինե Կարապետի Կարապետյանին և Նիկոլայ Կարապետի Կարապետյանին պատկանող տնամերձ հողամասի հասցեի փոփոխություն կատարելու մասին>> N 1421-Ա որոշման մեջ «Կարապետ Սամսոնի Կարապետյանին (ծնված 1964թվականի դեկտեմբերի 06-ին), Սվետլանա Կարապետի Կարապետյանին (ծնված 1964թվականի սեպտեմբերի 24-ին), Մարինե Կարապետի Կարապետյանին (ծնված 1990թվականի հունիսի 22-ին) և Նիկոլայ Կարապետի Կարապետյանին (ծնված 1991թվականի հոկտեմբերի 18-ին)» փոխարեն գրել «Կարապետ Սամսոնի Կարապետյանին (ծնված 1949թվականի հունիսի 08-ին), Սվետլանա Կարապետի Կարապետյանին (ծնված 1973թվականի օգոստոսի 12-ին), Մարինե Կարապետի Կարապետյանին (ծնված 1975թվականի մարտի 21-ին) և Նիկոլայ Կարապետի Կարապետյանին (ծնված 1980թվականի օգոստոսի 27-ին)»:

2.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում իրագրված օրվան հաջորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՂՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1770-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի ԹԻՎ 1756-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 20-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-20082024-08-0151 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փոքր Մանթաշ գյուղում Մարգարիտ Թաթոսի Փիլոսյանին, Այսեր Վարազդատի Փիլոսյանին, Վարազդատ Աիսերի Փիլոսյանին և Շիրազ Այսերի Փիլոսյանին պատկանող հողամասի հասցեի փոփոխություն կատարելու մասին» թիվ 1756-Ա որոշման մեջ՝ «4/1» թվերը փոխարինել «4/2» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարգարիտ Թաթոսի Փիլոսյանին, Այսեր Վարազդատի Փիլոսյանին, Վարազդատ Աիսերի Փիլոսյանին և Շիրազ Այսերի Փիլոսյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1771-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵԴՐԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ (ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՀԱՄԱՐ 83441236) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 18-5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՕԲՅԵԿՏՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 21-ի N 157-Ն որոշման հավելված 1-ի 1-ին մասի 12-րդ կետով, և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Սեդրակ Գրիգորյանի կողմից 2024 թվականի օգոստոսի 20-ին ներկայացված N 4430 մտից հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Սեդրակ Գրիգորյանին 2024 թվականի երրորդ եռամսյակի համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Անկախության փողոց 18-5 հասցեում գտնվող օբյեկտում հանրային սննդի կազմակերպման և իրականացման վերաբերյալ:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին անհատ ձեռնարկատեր Սեդրակ Գրիգորյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1772-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՍՏՂԻԿ ԵԳԱՆՅԱՆԻՆ (ՀԱՐԿ ԿՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ 57233643) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 19 Ա ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՂԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 21-ի N 157-Ն որոշման հավելված 1-ով, և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Աստղիկ Եգանյանի 2024 թվականի օգոստոսի 20-ի N 4435 մտից հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Աստղիկ Եգանյանին 2024 թվականի երրորդ եռամսյակի համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Անկախության փողոց 19 ա հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին անհատ ձեռնարկատեր Աստղիկ Եգանյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1773-Ա

«ՏՈՆՈՅԱՆ ՎԱՀԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ (ՀԱՐԿ
ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ 05555323) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ
ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ
ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և
վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ
կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023
թվականի նոյեմբերի 21-ի N 157-Ն որոշման հավելված 1-ով, և հաշվի առնելով «ՏՈՆՈՅԱՆ
ՎԱՀԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի օգոստոսի 21-ի
N 4444 մտից հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.Տալ թույլտվություն «ՏՈՆՈՅԱՆ ՎԱՀԵ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերությանը 2024 թվականի երկրորդ կիսամյակի համար Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Սպանդարյան փողոց 1/1 հասցեում գտնվող
խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ
ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային
արտադրատեսակների նմանակների վաճառքի համար:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին «ՏՈՆՈՅԱՆ ՎԱՀԵ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը իրազեկելու օրվան հաջորդող
օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1774-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ԳՅՈՒՂՈՒՄ ՇԱՀԵՆ ԱՂԱՍՈՒ ՓԻԼՈՍՅԱՆԻՆ, ԷԼՖԵՐԻԴԱ ԳԱՐԻԻԵԼԻ ՓԻԼՈՍՅԱՆԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՅԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեսուրսի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Ռուբեն Շահենի Փիլոյանի 2024 թվականի հուլիսի 10-ի թիվ 3887 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Անուշավան գյուղում Շահեն Աղասու Փիլոյանին (ծնված 1937 թվականի սեպտեմբերի 02-ին), Էլֆերիդա Գարիելի Փիլոյանին (ծնված 1942 թվականի հուլիսի 25-ին) պատկանող, 2004 թվականի նոյեմբերի 30-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N°1661865 վկայականով փաստագրված, 08-014-0073-0022 կադաստրային ծածկագրով, 0.096հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Անուշավան 29-րդ փողոց, 1-ին նրբանցք, 10 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1775-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ԳՅՈՒՂՈՒՄ ՇԱՀԵՆ ԱՂԱՍՈՒ ՓԻԼՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՅԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեսուրսի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Ռուբեն Շահենի Փիլոյանի 2024 թվականի հուլիսի 10-ի թիվ 3887 դիմումը
ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Անուշավան գյուղում Շահեն Աղասու Փիլոյանին (ծնված 1937 թվականի սեպտեմբերի 02-ին) պատկանող, 2007 թվականի մայիսի 03-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման №1398849 վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Անուշավան գյուղում գտնվող, 08-014-0040-0005 կադաստրային ծածկագրով, 0.029 հա մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Անուշավան 1-ին փողոց 31/1 շինություն հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ` 374 244 52021, էլ. փոստ` artikmun@mail.ru ինտ, կայք` www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1776-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՆԻԿ
ԳՅՈՒՂՈՒՄ ԱՐԹՈՒՐ ՊԱՎԼՈՒՇԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ, ՍԻՐՎԱՐԴ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ ԵՎ
ՊԱՎԼԻԿ ԱՐԹՈՒՐԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՅԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի
Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ
սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ
գույքի հասցեների ռեսուրսի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով
և հիմք ընդունելով Սիրվարդ Արշակի Պետոյանի 2024 թվականի հուլիսի 30-ի թիվ 3990
դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղում Արթուր
Պավլուշի Պետոյանին(ծնված 1968 թվականի օգոստոսի 3-ին), Սիրվարդ Արշակի
Պետոյանին(ծնված 1971 թվականի հոկտեմբերի 14-ին) և Պավլիկ Արթուրի Պետոյանին (ծնված
1990 թվականի սեպտեմբերի 28-ին) պատկանող, 2002 թվականի նոյեմբերի 25-ի անշարժ
գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N11072024-08-0028 վկայականով
փաստագրված, 08-113-0088-0020 կադաստրային ծածկագրով, 0,11հա մակերեսով
հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ
Փանիկ 25-րդ փողոց 3-րդ նրբանցք 5 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1777-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՆԻԿ
ԳՅՈՒՂՈՒՄ ԱՐԹՈՒՐ ՊԱՎԼՈՒՇԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ, ՍԻՐՎԱՐԴ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ ԵՎ
ՊԱՎԼԻԿ ԱՐԹՈՒՐԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի
Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ
սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ
գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով
և հիմք ընդունելով Սիրվարդ Արշակի Պետոյանի 2024 թվականի հուլիսի 30-ի թիվ 3990
դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղում
Արթուր Պավլուշի Պետոյանին(ծնված 1968 թվականի օգոստոսի 3-ին), Սիրվարդ Արշակի
Պետոյանին(ծնված 1971 թվականի հոկտեմբերի 14-ին) և Պավլիկ Արթուրի Պետոյանին (ծնված
1990 թվականի սեպտեմբերի 28-ին) պատկանող, 2002 թվականի նոյեմբերի 25-ի անշարժ
գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N11072024-08-0063 վկայականով
փաստագրված, 08-113-0035-0003 կադաստրային ծածկագրով, 0,12հա մակերեսով
հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ
Փանիկ 26-րդ փողոց 2-րդ նրբանցք 4 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1778-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՆԻԿ
ԳՅՈՒՂՈՒՄ ԱՐԹՈՒՐ ՊԱՎԼՈՒՇԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ, ՍԻՐՎԱՐԴ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ ԵՎ
ՊԱՎԼԻԿ ԱՐԹՈՒՐԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Սիրվարդ Արշակի Պետոյանի 2024 թվականի հուլիսի 30-ի թիվ 3990 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղում Արթուր Պավլուշի Պետոյանին(ծնված 1968 թվականի օգոստոսի 3-ին), Սիրվարդ Արշակի Պետոյանին(ծնված 1971 թվականի հոկտեմբերի 14-ին) և Պավլիկ Արթուրի Պետոյանին (ծնված 1990 թվականի սեպտեմբերի 28-ին) պատկանող, Փանիկ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մայիսի 15-ի N°1 որոշմամբ հատկացված, 08-113-0032-0012 կադաստրային ծածկագրով, 0,11852հա մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Փանիկ 26-րդ փողոց 3-րդ նրբանցք 3/1 բնակելի տուն հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



Կ. Տ.
Արթիկ համայնք,
2024 թվականի օգոստոսի 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1779-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ
ՔԱՂԱՔՈՒՄ ԵՐԵՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՏԻՍԻ
ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՉԱՐՉՅԱՆԻՆ ԵՎ ԳՐԵՏԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ՔԱՐՏԱՇՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՅԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի
Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ
սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ
գույքի հասցեների ռեսորի ստեղծման և վարման կարգի 45-րդ և 45.1 կետերով, հիմք
ընդունելով Գրետա Հովհաննեսի Քարտաշյանի 2024 թվականի հուլիսի 16-ի թիվ 3707 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքում Երեմ
Հովհաննեսի Առաքելյանին(ծնված՝ 1974 թվականի մայիսի 9-ին), Սուսանա Խատիսի
Առաքելյանին(ծնված՝ 1952 թվականի օգոստոսի 15-ին), Նունե Հովհաննեսի Չարչյանին(ծնված՝
1969 թվականի հունիսի 01-ին) և Գրետա Հովհաննեսի Քարտաշյանին (ծնված՝ 1971 թվականի
հունվարի 3-ին) պատկանող, 2006 թվականի ապրիլի 4-ի անշարժ անշարժ գույքի
սեփականության իրավունքի գրանցման N°1398943 վկայականով փաստագրված
բնակարանին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք
քաղաք Արթիկ Թ.Տոնականյան փողոց 26 շենք 17 բնակարան հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www.artik.am

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2024 թվականի N 1780-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՈՒՎԱՐ ԱՎԵՏԻՔԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԱԿԱՏՄԱՄԲ
ՎԱՀԱԳՆ ԱՎԵՏԻՔԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանս, ուսումնասիրելով համայնքի բնակիչ Վահագն Ավետիքի Մխիթարյանի 2024թվականի օգոստոսի 20-ի թիվ 4469 դիմումն իր քրոջ՝ Գոհար Ավետիքի Մխիթարյանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին.

ՊԱՐԶԵՑԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բնակիչ Վահագն Ավետիքի Մխիթարյանը (ծնված՝ 2003 թվականի հոկտեմբերի 20-ին, նույնականացման քարտ՝ 012701769, տրված 028-ի կողմից 2020թվականի մարտի 20-ին, հասցե՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Արթիկ քաղաք, Տոնականյան փողոց, շենք 33, բնակարան 14) դիմել է դատարան՝ իր քրոջը՝ Գոհար Ավետիքի Մխիթարյանին (ծնված՝ 2002թվականի հունվարի 29-ին, անձնագիր՝ AR0648994, տրված 028-ի կողմից 2018թվականի ապրիլի 5-ին) անգործունակ ճանաչելու պահանջով: Դատարանի 2023 թվականի օգոստոսի 7-ի թիվ ՇԴ3/3262/02/21 վճռով Վահագն Ավետիքի Մխիթարյանի դիմումը բավարարվել է՝ քաղաքացի Գոհար Ավետիքի Մխիթարյանը ճանաչվել է անգործունակ: Համաձայն վճռի եզրափակիչ մասի վճիռն օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

Վճռի հիման վրա Վահագն Ավետիքի Մխիթարյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին խնդրանքով՝ իր քրոջ նկատմամբ իրեն նշանակել խնամակալ, որպեսզի վերջինս կարողանա հանդես գալ անգործունակ ճանաչված անձի իրավունքներն ու շահերը ներկայացնող անձ:

Ելնելով անգործունակ ճանաչված անձի պաշտպանության, խնամքի, իրավունքների և օրինական շահերից, նրա անունից և ի շահ նրա անհրաժեշտ գործարքներ կնքելու անհրաժեշտությունից և ղեկավարելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33, 34, 36, և 37 հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների» կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերությամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գոհար Ավետիքի Մխիթարյանի (ծնված՝ 2002թվականի հունվարի 29-ին, անձնագիր՝ AR0648994, տրված 028-ի կողմից 2018թվականի ապրիլի 5-ին) նկատմամբ սահմանել խնամակալություն:
